Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 12

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<10>> սեպտեմբերի 2025թ. ք. Երևան

2025 թվականի սեպտեմբերի 10-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 6 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Սիմոնյան — Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ

Ա. Խաչատրյան — Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ

Ա. Ստեփանյան — Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար

Ռ. Այվազյան — Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը: Նիստից բացակայում են հանձնաժողովի հանձնաժողովի անդամներ Տ. Գասպարյանը և Պ. Գալստյանը: Նիստն արձանագրում էր Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության իրականացման լիցենզիան և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 դիմումի քննարկում:

2. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումի քննարկում:

Քննարկվեց՝

1. «ԴԱՐԳՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 09.09.2025թ. դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N 19 լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց «ԴԱՐԳՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 09.09.2025թ. դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N 19 լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումը և դիմումին կից նյութերը՝ լիցենզիայի բնօրինակը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԴԱՐԳՏՐԱՆՍ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում

Քննարկվեց՝ անհատ ձեռնարկատեր ՌՈԲԵՐՏ ԳՐԻԳՈՐԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2025 թվականի սեպտեմբերի 3-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2025 թվականի սեպտեմբերի 3-ին լիազոր մարմին է ներկայացրել հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, Կոտայքի մարզ, համայնք Նոր Հաճն, ք. Նոր Հաճն, Շաս-Սուղ-Ջոն 17 գործունեության վայրում:

Կազմակերպության գործունեության վայրը ուսումնասիրվել է նիստի մասնակիցների կողմից՝ առցանց տեսակապի միջոցով:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ՌՈԲԵՐՏ ԳՐԻԳՈՐԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն և 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներին՝ ենթակա է բավարարման:

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահ Ա. Սիմոնյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան